ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ՕՐ

Վեհափառ Հայրապետը 1972 թվականի սեպտեմբերի 3 թվակիր սրբատառ ու կանոնական Իր կոնդակով (տես «Էջմիածին» ամսագիր, 1972, սեպտեմբեր, էջ 3) հրահանգում էր մեր եկեղեցական Օրացույցի մեջ մուծել Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակը և ամեն տարի «մայիսի 22-ին» բոլոր եկեղեցիներում «հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ» կատարել՝ «կենդանի խոսքով էլ պանծացնելով նրանց զոհաբերումը՝ վասն հավատոյ և վասն հայրենյաց»:

Վեհափառ Հայրապետի հրահանգի համաձայն Մայր Աթոռի 1973 թվականի Օրացույցում (տես Օրացույց, էջ 69) մայիսի 22-ի օրը նշված է.

«Յիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց: Կատարի հոգեհանգիստ յեկեղեցիս Հայաստանեայց»:

Մայիսի 20-ին, կիրակի օրը, Երևման ս. Խաչի տոնին, Մայր տաճարում ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, պատարագիչ տ. Աղան վրդ. Բալեոզյանը, ի լուր ժողովրդյան, հանդիսավորապես ընթերցում է 1972 թվականի սեպտեմբերի 3 թվակիր հայրապետական կոնդակը, և ապա լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը իր քարոզի մեջ ոգեկոչում է հիշատակը Սարդարապատում զոհվածների:

Մայիսի 22-ին, երեքշաբթի օրը, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը, և ապա Հայոց Հայրապետի հանդիսաղղությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն՝ Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակին:

Վեհափառ Հայրապետի կանոնական կոնդակի առիթով և Սարդարապատի հերոսամարտի 55-ամյակի կապակցությամբ հրատարակում ենք «Հայության մեծ գոյամարտը» և «Սարդարապատի ու Բաշապարանի հերոսամարտերի հոգևորական մասնակիցներ» հուշագրությունները:

—•—